ԹԻՎ 34 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 21-Ա

02 ապրիլի 2023թ.
ք. Գորիս

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թվականի մարտի 26-ին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում տեղի են ունեցել համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու արտահերթ ընտրություններ:

2023 թվականի մարտի 27-ին թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ հիմք ընդունելով թվով 41 տեղամասային ընտրական հանձնաժողով-ների քվեարկության արդյունքների արձանագրությունները, ամփոփել է Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները և արձանագրությունով վավերացրել:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրա-պետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

« Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ համայնքում քվեարկության արդյունքների վերաբերյալ:»:

Նշված իրավանորմի պահանջների հաշվառմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 28-ի թիվ 8-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն կայացած վիճակահանության արդյունքները՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկել է թիվ 34/1, 34/22, 34/12 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները: Արդյունքում՝ թվով 2 տեղամասերում (34/22, 34/12) նախապես արձանագրված քվեարկության արդյունքները որևէ փոփոխություն չեն կրել, թիվ 34/1 տեղամասում միայն «Քաղաքացու որոշում» կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը պակասել է 1-ով, 143-ից դառնալով 142, իսկ մյուս տվյալներում որևէ փոփոխություն չի արձանագրվել:

Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների կազմակեպման և անցկացման նպատակով ձևավորված թվով 41 տեղամասային

ընտրական հանձնաժողովների գրանցամատյանների և տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների ուսումնասիրությամբ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2023 թվականի մարտի 27-ին կայացրել է N 17–Ա որոշումը՝ սեփական նախաձեռնությամբ թիվ 34/4, 34/5, 34/15 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների վերահաշվարկ իրականացնելու մասին և 2023 թվականի մարտի 28-ին՝ N 18–Ա որոշումը՝ սեփական նախաձեռնությամբ թիվ 34/6 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկ իրականացնել մասին: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա իրականացված վերահաշվարկի արդյունքներով արձանագրված փոփոխությունները հետևյալն են՝

- թիվ 34/5 ընտրական տեղամասում՝ «Քաղաքացու որոշում» կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը պակասել է 1-ով՝ 112-ից դառնալով 111, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանն ավելացել է 3-ով՝ 479-ից դառնալով 482, անվավեր քվեաթերթիկների թիվը պակասել է 3-ով՝ 8-ից դառնալով 5.
- 34/15 ընտրական տեղամասում՝ չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թիվն ավելացել է 100-ով՝ 8-ից դանալով 108.
- 34/4 ընտրական տեղամասում՝ ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների և ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը պակասել է 1-ով՝ 743-ից դառնալով 742, անվավեր քվեաթերթիկների թիվը պակասել է 1-ով՝ 3-ից դառնալով 2, «Քաղաքացու որոշում» կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը պակասել է 1-ով՝ 99-ից դառնալով 98, Հայաստանի հանրապետական կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը պակասել է 1-ով՝ 198-ից դառնալով 197, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանն ավելացել է 2-ով՝ 443-ից դառնալով 445,
- 34/6 ընտրական տեղամասում՝ անվավեր քվեաթերթիկների թիվը պակասել է 3-ով՝ 7-ից դառնալով 4, Հայաստանի հանրապետական կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը ավելացել է 1-ով՝ 160-ից դառնալով 161, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանն ավելացել է 2-ով՝ 495-ից դառնալով 497:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ վերահաշվարկի արդյունքում ընտրությունների արդյունքներում որևէ էական փոփոխություն չի կատարվել:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացված չի եղել որևէ դիմում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու մասին: Հաշվի առնելով վիճակահանությամբ և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ իրականացված վերահաշվարկի վերը ներկայացված արդյունքները, թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2023 թվականի ապրիլի 2-ին կազմել է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում մինչև քվեարկության օրը ստացվել է թվով 6 դիմում, որոնք ներկայացվել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների լիազոր ներկայացուցիչների կողմից և առնչվել են նախընտրական քարոզչության կանոնների պահպանմանը: Մեկ դիմումով հայցվել է տեղեկատվություն, որին սահմանված ժամկետում և կարգով տրվել է պատասխան, մնացած 5 դիմում-բողոքներով հարուցվել են վարչական վարույթներ և կայացվել են որոշումներ: Նշված որոշումներից մեկը՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի մարտի 25-ի N 16-Ա որոշումը բողոքարկվել է ՀՀ վարչական դատարան, որը կայացրել է հայցը մերժելու մասին վճիռ:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ «Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում:»:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում 2023 թվականի մարտի 31-ին ստացվել է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի արտահերթ ընտրություններին մասնակցած «Քացաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության լիազոր ներկայացուցիչ Մ. Ազոյանի դիմումը՝ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին:

Դիմումում նշված է.

«Սույն դիմումը ներկայացվում է Սյունիքի մարզի, Սիսիան համայնքի ավագանու 2023թ. մարտի 26-ի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու և ավագանու ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու պահանջներով հետևյալ հիմնավորմամբ:

Ի. ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՄԳԱՄԱՆՔՆԵՐԸ.

1. Սյունիքի մարզի Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 2023թ. մարտի 26-ի ընտրություններին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի՝ Շիրակի, Խանջյան. Մինասյան փողոցներում և Բռնակոթ բնակավայրում էլեկտրական հենասյուների վրա զոդված վահանակների վրա փակցվել են քարոզչական պաստառներ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանի պատկերով:

2. Վերոնշյալ քարոզչական պաստառները եղել են թվով 60 հատ 30 վահանակի վրա (երկկողմանի):

3. Վերոնշյալ քարոզչական պաստառները փակցվել և հանվել են՝ «Մեգանետ Էյչ դի» ՍՊԸ-ին պատկանող տեխնիկա-տրանսպորտային միջոցների կիրառումով:

4. Սիսիանի համայնքապետարանն անպատասխան է թողել թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հարցմանը, որով պահանջվել է ներկայացնել վերոնշյալ վահանակների պատկանելիության և դրանց վրա քարոզչական նյութերի փակցման վերաբերյալ:

5. Վերոնշյալ քարոզչական պաստառները հանվել են 18.03.2023թ., այսինքն՝ քարոզարշավի 18-րդ օրը:

6. Քարոզարշավը տևում է 24 օր:

7. Ի պատասխան թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հարցման «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչը պատասխանել է, որ իրենք տեղյակ չեն այդ պաստառների և դրանց տնօրինողի մասին:

8. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը իր «նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ» ներկայացված հայտարարագրում որպես վահանակի ծախս ներկայացրել է 3,300,000 ՀՀ դրամ, սակայն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը այլ՝ օրինական կարգով ստացված արտաքին գովազդային վահանակի վրա քարոզչական պաստառ չունի: Այլ կերպ ասած, բացի վերոնշյալ 30 ապօրինի վահանակները, չկան այլ վահանակներ, որոնց վարձակալությանը կարող էր ուղղվել այդ 3,300,000 ՀՀ դրամը:

9. Վերոնշյալ իրավախախտումն արձանագրվել է թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 15.03.2023թ. թիվ 10-Ա որոշման 3-րդ կետով:

10. Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 15.03.2023թ. թիվ 10-Ա որոշմամբ արձանագրվել է, որ «Գովազդային վահանակների տնօրինողի անհայտ լինելու պայմաններում նախընտրական քարոզչության ժամանակահատ-վածում հնարավոր չէ ապահովել ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ»:

11.Նույն որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է, որ վերոնշյալ քարոզչական պաստառները փակցվել են Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտմամբ և ենթակա են հանման:

12. Վերոնշյալ էլեկտրասյուները հանդիսանում են համայնքային սեփականու-թյուն՝ համաձայն ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 24.06.2022թ. թիվ 41-Ա որոշման հավելված 2-ի:

13. Տվյալ էլեկտրասյուները վարձակալության տրամադրելու վերաբերյալ ավագանու որոշում առկա չէ:

14. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համարը հանդիսանում է Սիսիան համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը, 4-րդ և 61-րդ համարները՝ նրա տեղակալները, որոնք ի պաշտոն պետք է համայնքում արտաքին գովազդի թույլտվություններ տրամադրեին, իսկ

առանց թույլտվության նման գովազդի տեղադրման դեպքում հարուցեին համապատասխան վարչական վարույթներ:

II. ԴԻՄՈՒՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ.

15. ՀՀ սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը, ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական, պետություն է»:

16. ՀՀ սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունը իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»:

17. ՀՀ սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ»:

18. ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ «1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները»:

19. Ըստ այդմ՝ իրավական պետության հիմքում ընկած է, ի թիվս այլնի, ընտրությունների միջոցով արտահայտված՝ ժողովրդի ընտրողների կամքը, որի ձևավորման հիմքում էլ, իր հերթին, ընկած է հավասար պայմաններում ակտիվ ընտրական իրավունքի իրացման սկզբունքը: Առանց ընտրություններին մասնակցող սուբյեկտների հավասար, ոչ խտրական, անկողմնակալ մրցակցային հնարավորությունների ապահովման հնարավոր չէ հասնել ժողովրդի ազատ կամքի ձևավորմանը:

20. Սահմանադրահիրավական այս տրամաբանության ներքո է օրենսդիրը ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել նախընտրական քարոզչության կանոնները, որոնց համաձայն՝ «1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները»:

21. 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել, որ «12. Հանրության համար տեսանելի քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են փակցվել միայն՝

1. հատուկ այդ նպատակով առանձնացված տեղերում, վճարովի գովազդային վահանակներում, ընտրական շտաբների վրա.

2. ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների (բացառությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, հանրակրթական դպրոցների, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի, հասարակական սննդի կամ առևտրի օբեկտների), տրանսպորտայի միջոցների (բացառությամբ հասարակական տրանսպորտի և տաքսու) վրա կամ դրանց ներսում: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսացող տարածքում (այդ թվում պատշգամբներում, պատուհանների վրա և այլն) կամ արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա»:

22. ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ « Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի տեղադրման դեպքում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ»:

23. ՀՀ ընտրական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ «1. Եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա համապատասխան ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումները: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա ավագանու ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է ավագանու ընտրությունների վերաքվեարկություն»:

24. Տվյալ պարագայում Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի՝ Շիրակ, Խանջյան, Մինասյան փողոցներում և Բռնակոթ բնակավայրում էլեկտրական հենասյուների վրա զոդված թվով 30 վահանակների վրա ապօրինաբար (առանց իրավական հիմքի, որն արձանագրվել է ՏԸՀ կողմից) փակցվել են թվով 60 հատ քարոզչական պաստառներ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանի պատկերով:

25. Նշված մասնավորապես՝

ա/ Նախընտրական քարոզչության 24 օրյա ժամանակահատվածից 18-ի ընթացքում Սիսիան համայնքում ապօրինաբար տեղադրված են եղել թվով 60 պաստառներ:

բ/ 15.03.2023թ. թիվ 10-Ա որոշմամբ արձանագրվել է, որ «Գովազդային վահանակների տնօրինողի անհայտ լինելու պայմաններում նախընտրական

քարոզչության ժամանակահատվածում հնարավոր չէ ապահովել ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ» :

գ/ Նույն որոշմամբ Հանձնաժողովն արձանագրել է Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի պահանջների խախտում:

դ/ Նշված որոշումը չի բողոքարկվել որևէ մասնակցի կողմից և մտել է օրինական ուժի մեջ:

26. Ստացվում է, որ Հանձնաժողովն ինքն է արձանագրել, որ Սիսիան համայնքում, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ապօրինի տեղադրված գովազդային վահանակների առկայության պայմաններում հնարավոր է ապահովել ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ: Ըստ այդմ՝ հնարավոր չէ ապահովել ակտիվ ընտրական իրավունքի կարևորագույն սկզբունքը՝ հավասարությունը: Ստացվում է, որ ընտրությունների արդյունքները, այսինքն՝ ընտրողների կամքը ձևավորվել է անհավասար ընտրապայքարի արդյունքում, այսինքն՝ ընտրությունների արդյունքները խեղաթյուրված են ու զուրկ ազատ լինելու հատկանիշից:

27. Ընդ որում՝ սույն դիմումի համատեքստում կատարված այն արձանագրումը, որ նախընտրական քարոզչությունն ընթացել է կողմնակալ և խտրական եղանակով դիտարկման է արժանի անկախ այն հանգամանքից, թե գովազդային վահանակների տնօրինողը հայտնի է, թե անհայտ: Այսինքն, նույնիսկ այն պարագայում, երբ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառները չեն փակցվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից, չի նշանակում, որ խախտում առկա չէ (չի էլ կարող, քանի որ խախտումն արձանագրվել է Հանձնաժողովի որոշմամբ): Այլ կերպ ասած, ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար որևէ էական նշանակություն չունի, իրավախախտումն կատարած սուբյեկտի հայտնի կամ անհայտ լինելը, այլ էական է՝ խախտման առկայությունն ու դրա ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա:

28. Այսպես, Օրենսդիրն ընտրություններն անվավեր ճանաչելու համար սահմանել է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պահանջը՝

- Ընտրական օրենսգրքի խախտում
- Խախտման հնարավոր ազդեցություն ընտրությունների արդյունքների վրա
- առանձին ընտրատեղամասում վերաքվեարկության միջոցով խախտումը շտկելու հնարավորության բացակայություն:

Անդրադառնանք յուրաքանչյուր պայմանին առանձին-առանձին:

<u>Ընտրական օրենսգրքի խախտման առկայությունը</u>.

Սույն դիմումում նշված փաստական հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովն արդեն իսկ իր 15.03.2023թ. թիվ 10-Ա որոշմամբ արձանագրել է ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի խախտում:

<u>- Խախտման հնարավոր ազդեցություն ընտրությունների արդյունքների վրա.</u>

Նախ նշենք, որ օրենսդրի պահանջը կայանում է ոչ թե խախտման բացասական ազդեցության փաստացի արձանագրումով, այլ այդպիսի հնարավորության

առկայություն: Օրենսդիրը օգտագործել է «կարող է» տերմինը: Հանձնաժողովն իր նույն՝ 15.03.2023թ. թիվ 10-Ա որոշմամբ արձանագրել է, որ «Գովազդային վահանակների տնօրինողի անհայտ լինելու պայմաններում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հնարավոր չէ ապահովել ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ»: Այսինքն, տվյալ պարագայում ոչ միայն առկա է խախտման բացասական ազդեցության վերաբերյալ վերացական ենթադրություն, այլ՝ լիազոր մարմնի կողմից ներկայացված հստակ փաստական դիրքորոշում: Ընդ որում՝ ակնհայտ է, որ այդպիսի անկողմնակալ ու ոչ խտրական մոտեցումն իրականացվել է հօգուտ այն քաղաքական ուժի, որի պաստառները փակցված են եղել:

<u>- Առանձին ընտրատեղամասում վերաքվեարկության միջոցով խախտումը շտկելու հնարավորության բացակայություն</u>

Վերոնշյալ երկու պայմանների առկայության պարագայում ակնհայտ է դառնում, որ կոնկրետ տեղամասում վերաքվեարկություն իրականացնելն ի զորու չէ ապահովել խախտման հետևանքների վերացումը, ուստի անհրաժեշտ է իրականացնել ընդհանուր վերաքվեարկություն:

Հանձնաժողովն, այնուամենայնիվ, իր կողմից իրականացվող վարչարարության ժամանակ թույլ է տվել մի շարք թերություններ, մասնավորապես՝ չի իրականացրել վերոնշյալ խախտման հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում:

Այսպիսով, Հանձնաժողովը վարչական վարույթի շրջանակներում հարցում է կատարել Սիսիանի համայնքապետարան և պահանջել տրամադրել տեղեկատվություն այդ վահանակների տնօրինողի վերաբերյալ, սակայն մինչև որոշում կայացնելը չի ստացել գրավոր պատասխան: Մեզ հայտնի չէ, թե արդյոք մինչ այս պահը նման պատասխան ստացել է, թե ոչ: Սակայն կարևոր է մեկ այլ հանգամանք՝ այն, որ համայնքապետարանն ուներ ուղիղ պարտականություն համայնքային սեփականություն հանդիսացող էլեկտրահաղորդիչների վրա արտաքին գովաղդային պաստառների տեղադրման դեպքում իրականացնել վարչական վարույթ և արտաքին գովազդի թույլտվության բացակայության դեպքում իրականացներ համապատասխան վարչարարություն, ինչը «տարօրինակ» կերպով չի իրականացվել փաստորեն: Ընդ որում՝ համայնքի ղեկավարն իր հերթին ունի պատվիրակված լիազորություն սեփական նախաձեռնությամբ վերացնելու նախընտրական քարոզչության կանոնների խախտմամբ փակցված պաստառները (ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված՝ 21, 9-րդ մաս): Նույն «տարօրինակ» կերպով ստացվում է, որ համայնքի ժամանակավոր պաշտոնակատարն այն անձն է, ում պատկերով քարոզչական պաստառներն ապօրինի կերպով փակցված են եղել այդ ապօրինի մոնտաժված վահանակների վրա: Հանձնաժողովը բացարձակ չի անդրադարձել այս հարցին ու չի իրականացրել պատճառահետևանքային կապի պարզմանն ուղղված գործողություններ:

Ավելին՝ Հանձնաժողովը քննարկման առարկա չի դարձրել այն հանգամանքը, որ փակցված քարոզչական պաստառները պատկանել են «Քաղաքացիական

պայմանագիր» կուսակցությանը նույնական են եղել ավագանու ընտրություններին այս կուսակցության մյուս քարոզչական պաստառների հետ, որի վրա նշված են եղել՝ տպաքանակը, պատվիրատուն և այլն: Հանձնաժողովը բավարարվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցչի այն պնդմամբ, թե իրենք տեղյակ չեն, թե ում են պատկանում վահանակները, սակայն Հանձնաժողովը պարտավոր էր քննարկման առարկա դարձնել այն հանգամանքը, որ նույնիսկ վահանակների տնօրինողի անհատ լինելու դեպքում դրանց վրա փակցված են «Քաղաքացիական պայմանագրին» պատկանող պաստառներ և 10 օրից ավել դրանց փակցված լինելու պայմաններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ոչ մի գործողություն չի արել իրեն պատկանող և «անհայտ հանգամանքներում» իր մոտից ասենք «գողացված» կամ « կորած» պաստառները պոկելու ուղղությամբ:

Հանձնաժողովի այս դիրքորոշումը, թե իբր «վահանակները» տնօրինողն անհայտ է, ստեղծում է նախադեպ, որ բոլոր տեսակի ընտրություններին հնարավոր է այսպիսի ապօրինությունը գցել «անհայտ անձի» գրպանը և այդպիսով մի կողմից հասնել քարոզչական նպատակներին և մյուս կողմից էլ մնալ անպատիժ: Ըստ այդմ՝ խախտում կատարած անձի, այդ անձի՝ մրցապայքարին մասնակցող կուսակցության հետ ֆորմալ- իրավական կապ ունենալ-չունենալու հանգամանքը որևէ նշանակություն չունի Ընտրական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դիսպոզիցիայի տեսանկյունից:

ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «3. Հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են հետևյալ սահմանափակումների հաշվառմամբ.

1) արգելվում է թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս կամ **պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը**՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար.

2) արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, **նյութական** ու մարդկային **ռեսուրսների** օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության անվտանգության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների»:

Հանձնաժողովը իր վարչական վարույթի շրջանակներում պարտավոր էր և հիմա էլ պարտավոր է անդրադառնալ համայնքի փաստացի ղեկավարի կողմից ցուցաբերված անգործությանը ու պարզել վահանակների ու դրանց վրա իր իսկ նկարով փակցված քարոզչական պաստառների միջև պատճառահետևանքային կապն ու տալ համապատասխան իրավական գնահատական:

Կանխելով Հանձնաժողովի այն փաստարկը, թե իբրև համայնքի ղեկավար Արմեն Հակոբջանյանը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում եղել է արձակուրդի մեջ ստորև այդ ժամանակահատվածի որոշումներն են, որոնք նա է ստորագրել/ընդունել այդ ժամանակահատվածում.

https://www.sisian.am/Pajes/DocFlow/Default.aspx?a=v&g=5f4d32d1-32cc-4131-9fb5-294dccf324d4

https://www.sisian.am/Pajes/DocFlow/Default.aspx?a=v&g=202b0675-94c7-44b5-9942-44bc3b4adaf2

https://www.sisian.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=2e106afe-6302-4508-88a8-a1b7452972de

https://www.sisian.am/Pajes/DocFlow/Default.aspx?a=v&g=33dd7225-2401-48a1-9932-55ff0374503b

https://www.sisian.am/Pajes/DocFlow/Default.aspx?a=v&g=1de4471e-1a4c-4c29-a275-97087d75f754

https://www.sisian.am/Pajes/DocFlow/Default.aspx?a=v&g=462fa6fe-2146-47ce-bdbd-aa96b9b15308

https://www.sisian.am/Pajes/DocFlow/Default.aspx?a=v&g=d3b62c09-75bb-4253-8d45-7df550f9343e

https://www.sisian.am/Pajes/DocFlow/Default.aspx?a=v&g=1b8563f4-02f2-4972-8d44-48cfaaa7dc1c

https://www.sisian.am/Pajes/DocFlow/Default.aspx?a=v&g=bd4a9d75-3271-407b-bfc6-e3f3246dac

https://www.sisian.am/pagesDocFlow/Default.aspx=v&g=e6fabaed-98b04fc3-92c3-2432464298c3

https://www.sisian.am/pagesDocFlow/Default.aspx=v&g=ff362141-1806-4e85-ada9-b00f2ba54dde

https://www.sisian.am/pagesDocFlow/Default.aspx=v&g=5a5078d1-4748-4b78-8b2c-ad1b41df6e34https://www.sisian.am/pagesDocFlow/Default.aspx=v&g=4d2ece5e-0407-45eb-8729-69113d97c1fe

d1b41df6e34https://www.sisian.am/pagesDocFlow/Default.aspx=v&g=8a387bad-eb0d-4aaf-99c4-8b66c9d9c71b և այլն:

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ «ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքովսահմանված համապատասխան ժամկետից առնվազն երկու օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջքանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում»:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ մեր կարծիքով սույն դիմումում ներառված բոլոր փաստական հանգամանքները ԵՆԹԱԿԱ են ստուգման հանձնաժողովի կողմից: Մասնավորապես՝ Համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի կողմից ապօրինի վահանակների և դրանց վրա ապօրինի փակցված քարոզչական պաստառների հանման ուղղությամբ քայլեր չձեռնարկելու (18 օր շարունակ), վահանակների տնօրինողի անհայտ լինելու հանգամանքին զուգահեռ այդ վահանակները համայնքային սեփականություն հանդիսացող էլեկտրասյուներին փակցված լինելու քարոզչական պաստառները «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության լինելու, շարունակվող վարչարարության շրջանակներում Հանձնաժողովի կողմից մինչ օրս վերոնշյալ հանգամանքները պարզած չլինելու, Համայնքապետարանի կողմից մինչև օրս Հանձնաժողովի հարցադրմանը պատասխանած չլինելու և Հանձնաժողովի կարծիքով վերոնշյալ իրավախախտման և դրա ազդեցության համար էական բոլոր մնացած հանգամանքները պարզելու վերաբերյալ: Այս առումով Հանձնաժողովի կողմից նախորդիվ կայացրած որոշումներին հղում կատարելը չի կարող բավարար լինել, քանի որ վերոնշյալ հանգամանքները քննարկման առարկա չեն դարձել ու չեն ներառվել Հանձնաժողովի նախորդիվ կայացրած որոշումների պատճառաբանական մասերում:»:

Դիմումով ներկայացվել է պահանջ՝ «անվավեր ճանաչել 2023թ. մարտի 26-ի Սիսիան համայնքի ավագանու ընտրությունները և նշանակել ավագանու ընտրությունների վերաքվեարկություն:»:

Դիմումին կից ներկայացված են հետևյալ նյութերը.

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Միրաբյանի կողմից 2023 թվականի մարտի 31-ին տրված քաղվածք՝ «Սիսիան համայնքի ավագանու 16.02.2018թ. «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 04-Ն որոշումից (նիստ N 1)», որն անստորագիր է և չի պարունակում կնիք (1 թերթ)՝ կից հավելվածով (2 թերթ), որը նույնպես անստորագիր է և չի պարունակում կնիք,

2) 2023 թվականի մարտի 14-ի «Անհատ ձեռնարկատեր Կարեն Կարապետյանին արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու մասին» նախագիծ, որն անստորագիր է և չի պարունակում կնիք (1 թերթ),

3) 31.03.2023թ. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ապօրինի փակցված նախընտրական քարոզչական պաստառների հոգեբանական ներգործության և ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցության գնահատման մասին» մասնագիտական կարծիք (3 թերթ), որը ստորագրված է ՔՈ ՍԴԿ լիազոր ներկայացուցիչ, քաղաքական վերլուծաբան Վ. Բալյանի կողմից,

4) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից «Նախընտրական հիմնադրամներ կատարած նվիրատվությունների և դրանց օգտագործման» 24.02.2023-10.03.2023թթ. և 24.02.2023-20.03.2023թթ. ժամանակահատվածների համար ներկայացրած թվով 2 հայտարարագրեր, որոնք ստորագրված են

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության լիազոր ներկայացուցիչ Ա. Մանավազյանի կողմից,

5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 24-ի թիվ 0834 գրությունը, որը ստորագրված է:

Ընտրական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա համապատասխան ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումները: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա ավագանու ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է ավագանու ընտրությունների վերաքվեարկություն:»:

Դիմումատուն պահանջում է անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի ընտրությունները և նշանակել ավագանու ընտրությունների վերաքվեարկություն:

Դիմումի ուսումնասիրությամբ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումատուն իր պահանջը հիմնավորում է նրանով, որ ընտրությունների նախապատրաստման փուլում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության կանոնների խախտումներ, որոնք, ըստ դիմումատուի, ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

Ընտրական օրենսգրքի 4-րդ գլխում սահմանվում են նախընտրական քարոզչության իրականացման հետևյալ եղանակները.

- զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացումը,
- քաղաքական գովազդը,
- ֆիլմերի ցուցադրությունը,
- քարոզչական պաստառներ, տպագիր այլ նյութեր փակցնելը (տարածելը),
- թեկնածուների հետ ընտրողների հանդիպումները,
- նախընտրական ժողովները,
- համացանցով քարոզչության իրականացումը,
- ընտրությունների հետ կապված մշակութային, մարզական և այլ միջոցառումների կազմակերպումը և այլն:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի ընտրություններին մասնակցող՝ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, Հայաստանի հանրապետական կուսակցությունը և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն իրենց նախընտրական քարոզչությունն իրականացրել են ընտրողների հետ հանդիպումների, զանգվածային լրատվության միջոցների, համացանցի, պաստառներ և քարոզչական այլ նյութեր

փակցնելու, տարածելու և այլ միջոցներով: Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն Ընտրական օրենսգրքով 19-րդ հոդվածի 7-րդ մասով իրեն վերապահված՝ նախընտրական քարոզչության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորության շրջանակներում պարբերաբար կատարել է շրջայցեր, ինչպես նաև քննության է առել նախընտրական քարոզչության կանոնների ենթադրյալ խախտումների վերաբերյալ դիմումները, հարուցել վարչական վարույթներ և կայացրել որոշումներ:

Որպես Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի ընտրություններն անվավեր ճանաչելու հիմք հանդիսացող փաստական հանգամանք դիմումատուն նշում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկած առաջին համարի թեկնածուի պատկերով քարոզչական պաստառները Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի խախտմամբ փակցված լինելը, ինչը հավաստվել է նաև թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 15.03.2023թ. թիվ 10-Ա որոշմամբ: Միաժամանակ, թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ քարոզչական պաստառները փակցված են եղել սահմանված վայրերում, այն է՝ գովազդային վահանակների վրա, սակայն գովազդային վահանակների տնօրինողի անհայտ լինելու պայմաններում հնարավոր չի եղել նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ապահովել ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ: Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 15.03.2023թ. թիվ 10-Ա որոշմամբ արձանագրվել է, որ վերոգրյալով պայմանավորված՝ այդ պաստառները ենթակա են հանման: Որոշման կատարումն ապահովվել է Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և 2023 թվականի մարտի 18-ին այդ պաստառներն արդեն հանված են եղել: Միաժամանակ, թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի ընտրություններին մասնակցող կուսակցությունները հնարավորություն են ունեցել օգտվելու այլ վայրերում առկա գովազդային վահանակներից, քարոզչական պաստառներ անվճար հիմունքներով փակցնելու համար տրամադրված վայրերից, ինչպես նաև այլ եղանակներով իրականացնելու նախընտրական քարոզչություն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ընտրություններին մասնակից կուսակցությունների համար ապահովված են եղել Ընտրական օրենսգրքով սահմանված եղանակներով նախընտրական քարոզչություն իրականացնելու հնարավորությունները:

Անդրադառնալով դիմումում ներկայացված հանգամանքին, որը ներկայացվում է որպես խախտում, այն է՝ համայնքի ղեկավար Արմեն Հակոբջանյանի կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում արձակուրդի մեջ լինելով՝ ստորագրել/ընդունել է որոշումներ, ապա թիվ 34 ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումում առկա հղումների ուսումնասիրությամբ փաստվում է, որ նշված որոշումները տեղադրված են առանց ստորագրությունների և որևէ ապացույց չի ներկայացվել առ այն, որ այդ որոշումները ստորագրվել և ընդունվել են Արմեն Հակոբջանյանի կողմից:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու հարցը քննարկելիս պետք է դրվի քաղաքացիների ընտրություններին մասնակցելու իրավունքի առաջնայնությունը: Հատկապես ընտրության արդյունքներում է նյութականացվում քվեարկության մասնակիցների կամաարտահայտությունը: Այդ իսկ պատճառով ընտրության արդյունքների պաշտպանման բավարար երաշխիքների ստեղծման հարցում կարևորվում է արձանագրված արդյունքների վավերականության սկզբունքը, եթե հակառակը չի ապացուցվել:

Հարկ է նկատել, որ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչման և վերաքվեարկության պահանջ ներկայացրած սուբյեկտի կողմից չի բողոքարկվել տեղամասային ընտրական հանձնաժողովների ակտերը, վերջինիս վստահված անձանց կամ թեկնածուների կողմից չեն ներկայացվել վերահաշվարկի և ոչ մի դիմում, Սիսիան համայնքի ավագանու ընտրությունների անցկացման համար կազմավորված թվով 41 տեղամասային ընտրական հանձնաժողովների որևէ անդամ տեղամասում արդյունքների արձանագրությունում չի կատարել հատուկ կարծիք ունենալու մասին գրառում:

Ընտրության արդյունքները կարող են անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, երբ առկա են հիմնավոր ապացույցներ, որ ընտրությունների կազմակերպման, քվեարկության նախապատրաստման, քվեարկության և ընտրության արդյունքներն ամփոփելու ընթացքում տեղի ունեցած խախտումները թույլ չեն տալիս ճշգրտորեն սահմանելու ընտրությունների քվեարկությանը մասնակցած քաղաքացիների կամաարտահայտության արդյունքները: Ինքնին ընտրական գործընթացի մասնակիցների կողմից առանձին ընթացակարգերի խախտումը չի կարող դիտարկվել որպես բավարար հիմք արդյունքներն անվավեր ճանաչելու համար:

Ընտրության էությունը կայանում է քաղաքացիների կողմից իրենց պատկանող քաղաքական իրավունքների իրականացման մեջ: Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ միայն ընտրության արդյունքների վրա ազդող խախտումների առկայության պարագայում արդյունքները կարող են անվավեր ճանաչվել, իսկ այդպիսիք չեն արձանագրվել:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Միրաբյանի կողմից 2023 թվականի մարտի 31-ին տրված քաղվածքը՝ «Սիսիան համայնքի ավագանու 16.02.2018թ. «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 04-Ն որոշումից (նիստ N 1) և կից հավելվածը դիմումում ներկայացված հանգամանքների նկատմամբ կիրառելի

չեն, քանի որ նույն հավելվածի 12-րդ կետով սահմանված է, որ «սույն կանոնները չեն կարգավորում քաղաքական գովազդի հետ կապված հարաբերությունները»:

Դիմումին կից ներկայացված 2023 թվականի մարտի 14-ի «Անհատ ձեռնարկատեր Կարեն Կարապետյանին արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու մասին» նախագիծի կապակցությամբ, սույն վարույթի շրջանակներում թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Սիսիանի համայնքապետարան ներկայացրել է բանավոր հարցում, որին ի պատասխան Սիսիանի համայնքապետարանից 31.03.2023թ. ստացվել է պատասխան առ այն, որ Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից Ա/Ձ Կարեն Կարապետյանին գովազդային վահանակների տեղադրման թույլտվության որոշում չի կայացվել:

Դիմումին կից ՔՈ ՍԴԿ լիազոր ներկայացուցիչ, քաղաքական վերլուծաբան Վ. Բալյանի կողմից ներկայացված 31.03.2023թ. ««Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ապօրինի փակցված նախընտրական քարոզչական պաստառների հոգեբանական ներգործության և ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցության գնահատման մասին» մասնագիտական կարծիքը թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ընդունում է որպես դիմումատուի կողմից ներկայացված մոտեցում, որը չունի ապացուցողական նշանակություն:

Դիմումին կից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից «Նախընտրական հիմնադրամներ կատարած նվիրատվությունների և դրանց օգտագործման» 24.02.2023-10.03.2023թթ. և 24.02.2023-20.03.2023թթ. ժամանակահատվածների համար ներկայացած թվով 2 հայտարարագրերի կապակցությամբ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից 2023 թվականի մարտի 31-ին տրվել է եզրակացություն, որը հրապարակված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, համաձայն որի՝ «Բոլոր սուբյեկտների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:»:

Սույն վարչական վարույթի ընթացքում «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության լիազոր ներկայացուցիչ Վ. Բալյանի կողմից ներկայացվեցին նոր փաստական հանգամանքներ: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից դիմումատուին և «Քացաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության լիազոր ներկայացուցիչ Վ. Բալյանին տրվեց ժամանակ նշված հանգամանքները հիմնավորող ապացույցներ ներկայացնելու համար, և նիստն ընդմիջվեց մինչև 02,04,2023թ, ժամը՝ 13:45-ը:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստը վերսկսվեց 02,04,2023թ, ժամը՝ 13:45-ին: Լիազոր ներկայացուցիչ Վ. Բալյանի կողմից ներկայացվեցին լրացուցիչ նյութեր և բացատրություններ ներկայացված նոր նյութերի և դիմումում նշված հանգամանքների վերաբերյալ: Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստն ընդմիջվեց մինչև 02,04,2023թ, ժամը՝ 16:30-ն-՝ ներկայացված նյութերն ուսումնասիրելու համար և վերսկսվեց հայտարարված ժամին:

Դիմումատուի կողմից սույն վարչական վարույթի ընթացքում ներկայացվեցին հետևյալ լրացուցիչ ապացույցները՝

- մեկ լուսանկար և նույն լուսանկարի տեսագրությունը, որոնցից պարզ չէ, թե որտե՞ղ և ե՞րբ է կատարվել տվյալ լուսանկարահանումը և տեսագրությունը: Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզեց, որ լուսանկարում և տեսագրությունում ներկայացված է նույն տարածքը, որը հանդիսանում է մասնավոր սեփականություն և շինությունը տիրապետող անձը փակցրել է թեկնածուի վերաբերյալ քարոզչական նյութեր:

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կանոնակարգումների համաձայն.

«2. Հանրության համար տեսանելի քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են փակցվել միայն՝

1) (...).

2) ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների (բացառությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, հանրակրթական դպրոցների, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի, հասարակական սննդի կամ առևտրի օբյեկտների), տրանսպորտային միջոցների (բացառությամբ հասարակական տրանսպորտի և տաքսու) վրա կամ դրանց ներսում: (...)»:

Հաշվի առնելով, որ դիմումատուի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որ նշված շինությունը հանդիսացել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական շտաբ, և հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իրավակարգավորումը թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված փաստական հանգամանքը չի կարող որակվել որպես Ընտրական օրենսգրքով սահմանված նորմերի խախտում:

Սույն վարչական վարույթի ընթացքում լիազոր ներկայացուցիչ Վ. Բալյանի կողմից ներկայացվեց բանավոր բացատրություն առ այն, որ Սիսիան համայնքապետարանի աշխատակիցներն ստացել են ինչ որ ծանուցում համայնքապետարանի կառուցվածքային փոփոխությունների մասին: Լիազոր ներկայացուցչի կարծիքով դա կարող էր ընտրությունների ընթացքում ազդել ընտրողների կամաարտահայտության վրա: Ներկայացված հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացվել, և հաշվի առնելով, որ բարձրացված հարցը վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմնի գործունեության կազմակերպմանն ու հանդիսանում է վերջինիս գործողության արդյունք՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովը գտնում է, որ այն չի կարող հանդիսանալ Ընտրական օրենսգրքով կարգավորվող իրավահարաբերությունների առարկա, հետևապես չի կարող քննարկվել և գնահատվել սույն վարույթի շրջանակներում, առավել ևս չի կարող որակվել որպես խախտում:

«Քացաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության լիազոր ներկայացուցիչ Վ. Բալյանի կողմից ներկայացվեց նաև թվով 21 լուսանկար (որոնցում առկա են նաև Սիսիան համայնքին չվերաբերող նյութեր): Ըստ լիազոր ներկայացուցչի, այդ նյութերի հրապարակմամբ խախտվել է նախընտրական քարոզչության սահմանված կարգը և նախընտրական քարոզչության ֆինանսավորման կարգը:

Ներկայացված լուսանկարների ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրում է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ունի պարտավորություն համացանցում գովազդ տեղադրելու համար վճարել միայն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքական գովազդի համար և պարզ չէ թե ինչ կերպ է խախտվել նախընտրական քարոզչության սահմանված կարգը, քանզի համացանցից կատարված ըստ այդ լուսանկարների երևում են ամսաթվեր: Միևնույն ժամանակ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ սույն վարույթի շրջանակներում արդեն իսկ անդրադարձել է նախընտրական քարոզչության ֆինանսավորման հարցին և արձանագրել, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից 2023 թվականի մարտի 31-ին տրվել է եզրակացություն, որը հրապարակված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ համաձայն որի՝ «Բոլոր սուբյեկտների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ դիմումում ներկայացված չեն այնպիսի հանգամանքներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

2023 թվականի մարտի 26-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանակներում թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով այլ դիմումներ (բողոքներ) չեն ներկայացվել:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի նախագահի 2023 թվականի ապրիլի 2-ի թիվ ԴԴԱ-5-Ե-13114/23 գրության համաձայն 2023 թվականի ապրիլի 2-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի վարույթում 2023 թվականի մարտի 26-ին կայացած Սյունիքի մարզի Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ անավարտ գործ առկա չէ:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է 2023 թվականի մարտի 26-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2023 թվականի մարտի 26-ին արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները և 2023թ. մարտի 31-ին ընդունել է N 20-Ա որոշումը, ըստ որի արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականներն ընտրությունների արդյունքների վրա որևէ ազդեցություն չեն ունեցել:

Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով համայնքում քվեարկության արդյունքների արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընդունած որոշումը, ամփոփում է համայնքում քվեարկության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. 2023 թվականի մարտի 26-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Ընտրական օրենսգրքի խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ՝ **Ա.Ստեփանյան**